ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա՛գղիա – Փորթուկալ։ — Նախընթաց ամսոյն մէջ արդէն խօսեցանք այս երկու տէրութեանց մէջ եղած դաշինքի՝ խնդրոյ մը պատճառաւ ծագած դժուութեան վրայ, յրուսմ՝ փորթուկալ անհամեմատակար քան զհինաւուրցն և հզօր Ալպիոն՝ տեղի տուաւ մեծագոյն և վերահաս թշուառութենէ մը վախելով. թէպէտ կառավարութիւնն այս ստիպողական և անհրաժեշտ զիջումն ըրաւ՝ սակայն ժողովուրդը՝ որ միշտ նմանօրինակ խնդրոց մէջ աղարտած տեսնելով իւր ազգայի՝ պատիւը և անգէտ իր զօրութեանց, միշտ ինքզինքը հզօր կը դատէ՝ բողոքեց այս բռնութեան և իւր կառավարութեան ցուցած երկչոտութեան դէմ. և այս բողոքն՝ ի գործ իսկ դրաւ. ցարդ փորթուկէզ վաճառականութիւնն սերտիւ կապուած էր ընդ Անգղիոյ, այլ այս դէպքէն վերջը՝ փորթուկէզ վաճառականք թողուցին բոլորովին զԱնգղիա և իրենց պէտք եղած նախնական նիւթերը և այլ առարկայները զորս ցարդ կը մատակարէր իրեն Անգղիա՝ սկսան խնդրել զայն այժմ Բարիզու, Պերլինի և այլ մայրաքաղաքաց հրապարակաց վրայ։ Այս դրամական կամ վաճառականական կռիւը թէպէտ ոչ երբեք քաղաքական ծանր կերպարանք մը կրնայ առնուլ սակայն դարձեալ մեծ հարուած մը պիտի լինի փորթուկալի համար։

Գաղղիա։ — Այս ամիս՝ի Գաղղիա հանգիպած նշանաւոր քաղաքական դէպքերն են, Օրլէանի դքսին բանտարկութիւնը, և մանաւանդ ընտրութիւնքն։ Դուքսը չենք գիտեր ցարդ ինչ պատճառէ դրդեալ. յանկարծակի կ՚երևնայ Գաղղիոյ հողին վրայ և ինքզինքը չափահաս հրատարակելով՝ փափագ կը յայտնէ բանակին մէջ ծառայելու. կ՚երթայ պատերազմի պաշտօնատունը՝ և պաշտօնեային անգէտ ամենևին իր դիպաց՝ կը դրկէ զինքը՝ի քաղաքական պաշտօնատունն ուր և կը ձերբակալուի՝ իբր յանցաւոր օրինաց։ Պաշտօնէից խորհրդարանը երկամեայ բանտարգելութեան դատապարտեց այս երիտասարդ իշխանը։, բայց կը յուսացուի որ քիչ վերջը նախագահը շնորհէ իր պատիժը։ Վերջին մասնական ընտրութիւնք ալ հակառակ ամենևին նախքն ։ աց ընդհանուր ընտրութեանց՝ ամէնքն ալ յաջողեցան՝ի շահ պուլանժէականաց։

digitised by A.R.A.R.@